

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

-----2013թ. N- Ն

ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՏՆԵՐԻ
ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Հաստատել <Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության մանկատների շրջանավարտներին> ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ծ Ր Ա Գ Ի Ր

**ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՏՆԵՐԻ
ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ**

I. Ներածություն

1. Հայաստանի Հանրապետությունում մանկատների շրջանավարտներին 2003 թվականից սկսած մինչև 2013 թվականը ներառյալ տրամադրվել է պետական աջակցություն «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագրի շրջանակներում: Նշված ծրագիրը աջակցել է 1991 թվականից մինչև 2003 թվականը մանկատներից դուրս եկած անձանց և 2003 թվականից սկսած՝ 18 տարին լրացած շրջանավարտներին:

2. «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագրի իրականացումը, որպես Հայաստանում սոցիալական պատվերի առաջին փորձ, պատվիրակվել է «Հայ ժողովրդավարական ֆորում» հասարակական կազմակերպությանը, որը մեծ առաջընթաց էր պետություն-հասարակական հանրություն համագործակցության խթանման գործում: 2006-2013 թվականների ընթացքում ծրագիրն իրականացվել է «Հայ օգնության միություն» հասարակական կազմակերպության համագործակցության շրջանակներում:

3. «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագրի նպատակն էր աջակցել մանկատան շրջանավարտներին՝ սոցիալական և հոգեբանական բազմաթիվ խնդիրներ ունեցող անձանց:

4. 2003-2013 թվականների ընթացքում վերոհիշյալ ծրագրում ընդգրկված 453 շահառուի տրամադրվել է սոցիալ-հոգեբանական, առողջապահական, կրթական և իրավաբանական ծառայություններ: Տասը տարիների ընթացքում ձեռք են բերվել լուրջ հաջողություններ, որոնք էապես փոխել են ծանր իրավիճակներում գտնվող անձանց, նրանց երեխաների և ընտանիքների հետագա կյանքը: 2003-2008 թվականների ընթացքում մանկատան 160 շրջանավարտ և հարազատների ընտանիքներում բնակվող առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող 6 անձ ստացել է բնակարան: 2012 թվականին մանկատան 27 շրջանավարտի հատկացվել է բնակարան՝ ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 2-ի N 1009-Ն որոշման շրջանակներում:

5. Սոցիալական պաշտպանության ոլորտի բարեփոխումների արդյունքում կատարելագործվել են առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին վերաբերող օրենսդրությունն ու աջակցության մեխանիզմները, որի արդյունքում պետական աջակցությունը մանկատների շրջանավարտներին դարձել է առավել նպատակային և

արդյունավետ: Բարեփոխումների ընթացքում ստեղծվել և իրականացվել են ծառայություններ, որոնք կանխարգելում են ծնողներ ունեցող երեխաների մուտքը մանկատներ, որը հանգեցրել է մանկատներում երեխաների թվի կրճատմանը: Մինևույն ժամանակ վերակազմակերպվել է երկու մանկատուն (Երևանի «Զատիկ» և Գյումրու Ֆ. Նանսենի անվան մանկատները), որոնք դարձել են մանկատների նկատմամբ այլընտրանքային ծառայություններ իրականացնող հաստատություններ անապահով և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների երեխաների համար: Ներկայում Հայաստանի Հանրապետությունում Գավառի և Վանաձորի ընդհանուր տիպի մանկատներն են միայն, որոնք, իրենց կանոնադրության համաձայն, խնամք և սոցիալական պաշտպանություն են տրամադրում մինչև 18 տարեկան երեխաներին:

II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

7. Սույն ծրագրի նպատակն է՝ ապահովել Հայաստանի Հանրապետությունում մանկատների շրջանավարտների սոցիալական պաշտպանությունը, որը կնպաստի նրանց հետագա կյանքի ինքնուրույն կազմակերպմանը և ինտեգրմանը հասարակությանը:

Ծրագրի նպատակն է նաև ստեղծել բավարար պայմաններ Գավառի և Վանաձորի մանկատների շրջանավարտների համար:

III. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

8. Ծրագրից ակնկալվող արդյունքներն են՝

- 1) Հայաստանի Հանրապետության Գավառի և Վանաձորի մանկատների շրջանավարտներին աջակցությունը և խորհրդատվությունը.
- 2) Գավառի և Վանաձորի մանկատների շրջանավարտների համար ժամանակավոր կացարանի ապահովումը.
- 3) Գավառի և Վանաձորի մանկատների շրջանավարտներին կրթաթոշակի և օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին աջակցության տրամադրումը.
- 4) Հայաստանի Հանրապետությունում մանկատների շրջանավարտների հասարակությանն ինտեգրումը:

IV. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

9. Ծրագրի շրջանակներում նախատեսվող միջոցառումներն են՝

- 1) մանկատների շրջանավարտների հիմնահարցերի ուսումնասիրություն, կարիքների գնահատում և անհատական աջակցության ծրագրերի կազմում:

Մանկատների աշխատակազմերի հետ սերտ համագործակցությամբ կուսումնասիրվեն յուրաքանչյուր շրջանավարտի անհատական գործերը, նախկինում կատարված կարիքների գնահատման փաստաթղթերը, շրջանավարտի խնամքի և սոցիալական պաշտպանության անհատական ծրագրերը: Նշված աշխատանքների հիման վրա, շրջանավարտներին աջակցելու նպատակով, ծրագրի շրջանակներում կիրականացվի յուրաքանչյուր շրջանավարտի կարիքների խորը մասնագիտական գնահատում և կկազմվի աջակցության անհատական ծրագիր: Անհատական ծրագիրը

կներառի ծրագրով նախատեսված բոլոր ծառայությունների իրականացման միջոցառումները:

Ծրագրով նախատեսված է իրականացնել հետևյալ ծառայությունները՝

- ա. սոցիալ-հոգեբանական ծառայությունների տրամադրում,
- բ. իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն,
- գ. կրթության ապահովման աջակցություն, մասնագիտական կողմնորոշում, վերապատրաստում,
- դ. բուժօգնության տրամադրման աջակցություն,
- ե. աշխատանքի տեղավորման աջակցություն.

2) Սոցիալ-հոգեբանական ծառայությունների տրամադրում

Սոցիալ-հոգեբանական ծառայությունների տրամադրման նպատակն է նպաստել մանկատան շրջանավարտների հարմարեցմանը ինքնուրույն կյանքին՝ մանկատանից դուրս: Ծրագրի շրջանակներում մասնագիտական սոցիալ-հոգեբանական ծառայություններ կտրամադրվեն շրջանավարտներին անհատապես՝ ըստ գնահատված կարիքների, ինչպես նաև ընդհանուր խմբային աջակցության և ուսուցողական դասընթացների միջոցով: Նշված ծառայություններն ուղղված կլինեն՝

- ա. շրջանավարտի անձնային կարողությունների և հմտությունների զարգացմանը.
- բ. սոցիալական ցանցերի ստեղծմանը,
- գ. միջանձնային հարաբերությունների զարգացմանը:

3) Իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն

Ծրագրի շրջանակներում շրջանավարտների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար կտրամադրվի իրավաբանական խորհրդատվություն և օգնության: Անհրաժեշտության դեպքում իրավաբանական օգնություն կտրամադրվի գույքային և անձնական ոչ գույքային իրավունքների պաշտպանության համար:

4) Մասնագիտական կողմնորոշում, ուսուցում, վերապատրաստում

Համապատասխան աջակցություն կցուցաբերվի շրջանավարտներին մասնագիտական կողմնորոշման և նրանց հետագա կրթության կազմակերպման գործում: Ելնելով շահառուների գիտելիքներից և նախասիրություններից, նրանց կրթությունը կկազմակերպվի հետևյալ ուղղություններով.

- ա. առաջնային մասնագիտական ուսուցում.
- բ. մասնագիտացման վերապատրաստումներ,
- գ. միջին մասնագիտական կրթություն,
- դ. բարձրագույն մասնագիտական կրթություն:

5) Շրջանավարտներին բժշկական օգնության անվճար տրամադրում

Ծրագրի շրջանակներում շրջանավարտի կարիքների գնահատման հիման վրա կցուցաբերվի աջակցություն համապատասխան բժշկական հաստատություններում բժշկական հետազոտություններ իրականացնելու նպատակով: Անհրաժեշտության դեպքում շրջանավարտները կընդգրկվեն ամենամյա պետական առողջապահական նպատակային ծրագրերում:

6) Շրջանավարտների զբաղվածության ապահովում

Սույն ծրագրի 9-րդ կետի 4-րդ ենթակետի (ա) պարբերությամբ նախատեսված միջոցառման համաձայն շրջանավարտները ներգրավված կլինեն մասնագիտական ուսուցման հաստատություններում և կստանան համապատասխան վերապատրաստում: Ելնելով աշխատանքի շուկայի պահանջներից, ինչպես նաև հաշվի առնելով շրջանավարտների պատրաստվածությունն ու նախասիրությունները, համապատասխան աջակցություն կտրամադրվի շրջանավարտների զբաղվածության ապահովմանը: Այս միջոցառումը կիրականացվի ՀՀ աշխատանքի և սոցիալական հանրցերի նախարարության «Հայաստանի Հանրապետության զբաղվածության ծառայություն» գործակալության տարածքային կենտրոնների, մասնավոր գործատուների և սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների հետ համագործակցության միջոցով:

V. ՄԱՆԿԱՏՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՑԱՐԱՆՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ

10. Մանկատան շրջանավարտներին ժամանակավոր կացարան տրամադրելու վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով ծրագիրն իրականացնող կազմակերպությունը կիրականացի շրջանավարտների սոցիալական կարիքների գնահատում՝ պարզելու արդյոք շրջանավարտներն ունեն օրինական գույքային իրավունք կամ հարազատներ, որոնց հետ վերամիավորումը մեկ հարկի տակ բխում է նրանց լավագույն շահերից: Վերը նշված հնարավորությունների բացակայության դեպքում և գնահատված կարիքների հիման վրա շրջանավարտներին կտրամադրվի ժամանակավոր կացարան՝ երկու փուլով.

1) բնակարանի վարձակալում, մինչև ՀՀ կառավարության 2013 թվականի օգոստոսի 1-ի N 894-Ն որոշման համաձայն սոցիալական բնակարանային ֆոնդի մաս կազմող ժամանակավոր կացարանով ապահովումը:

Մանկատների շրջանավարտներին վարձակալությամբ տրվող կացարանում տեղավորվելու համար անհրաժեշտ են հետևյալ փաստաթղթերը՝

ա. դիմում՝ տրված շրջանավարտի կողմից.

բ. առանց ծնողական խնամքի մնացած երեխա հաշվառված լինելու մասին խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից տրված տեղեկանքը.

գ. անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիրը և անձնագրի պատճենը).

դ. ծնողների կամ միակ ծնողի մահվան վկայականը (մահվան վկայականը և մահվան վկայականի պատճենը).

ե. ծնողներին կամ միակ ծնողին անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու մասին դատարանի վճիռը /առկայության դեպքում/.

զ. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված բնակելի տարածության սեփականության մասին տեղեկանք:

Գավառի և Վանաձորի մանկատներում խնամվող 18 և 18-ից բարձր տարիք ունեցող անձանց համար կացարանները կվարձակալվեն այնպիսի վայրերում, որոնք առավելագույնս կնպաստեն շրջանավարտների սոցիալական հարմարեցմանը և ինտեգրմանը հասարակության մեջ:

Շրջանավարտների համար ժամանակավոր կացարան վարձակալելու նպատակով ծրագիրն իրականացնող կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարձակալության պայմանագիր կկնքի ընտրված կացարանների սեփականատերերի հետ: Վարձակալության պայմանագրերը կկնքվեն մեկ տարի ժամկետով՝ անհրաժեշտության դեպքում ժամկետի երկարաձգման պայմանով: Ըստ կնքված պայմագրերի, կացարանների վարձակալության համար ՀՀ պետական բյուջեով սահմանված գումարը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը կփոխանցի ծրագիրն իրականացնող հասարակական կազմակերպության բանկային հաշվին, իսկ վերջինս կվճարի ամսական վարձավճարը կացարանների սեփականատերերին: Վարձակալական պայմանագրերը, ինչպես նաև վճարումները հաստատող փաստաթղթերը ծրագիրն իրականացնող հասարակական կազմակերպությունը կներկայացնի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը: Յուրաքանչյուր ամսվա վարձակալության վճարումը հաստատող փաստաթղթերը ծրագիրն իրականացնող կազմակերպությունը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը կներկայացնի մինչև հաջորդ ամսվա 10-ը.

2) կացարանի տրամադրում համաձայն ՀՀ կառավարության 2013 թվականի օգոստոսի 1-ի N 894-Ն որոշման: Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք և շրջանավարտները համարվում են առաջնահերթ խումբ բնակելի տարածքով ապահովման ժամանակ:

Վերոնշյալ որոշմամբ սահմանված կառույցների կողմից կիրականացվեն համապատասխան աշխատանքներ, որպեսզի սույն կետի 1) ենթակետում նշված վարձակալության պայմանագրերի ժամկետի ավարտից հետո շահառուներին կտրամադրվի բնակելի տարածք:

Միջոցառումը կիրականացվի մանկատների աշխատակազմերի, սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների համագործակցությամբ՝ հիմք ընդունելով շրջանավարտների կարիքների գնահատման արդյունքները:

VI. ՄԱՆԿԱՏՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ԵՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

11. Պետական միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններում շահառուների կրթությունը կկազմակերպվի համաձայն «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի: Պետական միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթությունը շարունակող շրջանավարտները կստանան կրթաթոշակ՝ օրենքով սահմանված կարգով:

12. Մասնավոր միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող շրջանավարտների ուսման վարձի ծախսերը կվճարվեն սույն ծրագրի շրջանակներում՝ յուրաքանչյուր շրջանավարտի համար տարեկան 550.000 դրամի չափով: Մասնավոր միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող շրջանավարտները սույն ծրագրի բյուջեից կստանան ամսական կրթաթոշակ՝ 10.000 դրամի չափով:

VII. ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

15. Ծրագիրն իրականացնող մասնագետների կողմից սոցիալ-հոգեբանական ծառայությունները կիրականացվեն երկու ուղղությամբ.

1) «Կես-ճանապարհային» աջակցություն մանկատներում խնամվող 14-18 տարեկան երեխաներին.

Միջոցառման իրականացման նպատակն է մանկատներում խնամվող 14-18 տարեկան երեխաներին նախապատրաստել մանկատնից դուրս ինքնուրույն կյանքին: Նախատեսվում է երեխաների համար կազմակերպել սոցիալական հմտությունների ուսուցանում և հոգեբանական աշխատանք: «Կես-ճանապարհային» աջակցության միջոցառումները կմշակվեն և կիրականացվեն Գավառի և Վանաձորի մանկատների աշխատակազմերի և ծրագիրն իրականացնող հասարակական կազմակերպության կողմից:

2) վերահսկողություն ծրագրի շահառուների նկատմամբ՝ մինչև նրանց 23 տարին լրանալը.

«Պետական աջակցություն մանկական խնամակալական հաստատությունների շրջանավարտներին» ծրագրի իրականացման փորձը ցույց է տվել, որ անհրաժեշտ է շարունակել սոցիալական և հոգեբանական աջակցությունը և վերահսկողություն իրականացնել շահառուների կյանքի նկատմամբ՝ ամրապնդելու կատարված աշխատանքների արդյունքները և առավելագույնս նպաստելու նրանց ինտեգրմանը հասարակությանը: Այս նպատակով սույն ծրագիրը նախատեսում է համապատասխան վերահսկողական աշխատանքների միջոցով աջակցել շահառուներին՝ մինչև նրանց 23 տարին լրանալը:

VIII. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

16. Ծրագիրն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների և օրենքով չարգելված այլ աղբյուրների հաշվին՝ հասարակական կազմակերպության միջոցով, որի հետ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը կկնքի գործակալական պայմանագիր: Ծրագրի կատարման նկատմամբ մոնիթորինգն իրականացվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ «ՊԵՏԱԿԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՏՆԵՐԻ
ՄԱՆԿԱՏՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Իրավական ակտի հիմնավորումը

ՀՀ կառավարության «Պետական աջակցություն մանկատան շրջանավարտներին ծրագրերը հաստատելու մասին» որոշման նախագծի մշակումը պայմանավորված է երեխաների պաշտպանության համակարգում իրականացվող բարեփոխումներով և ՀՀ կառավարության 27 դեկտեմբերի 2012 թվականի N 1694-Ն որոշման հավելված 2-ի 1-ին կետի պահանջով:

2. Անհրաժեշտությունը

Նախագծի մշակման անհրաժեշտությունը բխում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և մանկատան շրջանավարտների մոտ սոցիալական հմտություններ զարգացնելու, սեփական ուժերով սեփական խնդիրները հոգալու, հասարակության մյուս խմբերի հետ լիարժեք կյանքով ապրելու կարողություն ձևավորելու նպատակից:

3. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից «Պետական աջակցություն ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագիրն իրականացվել է 2003-2013 թվականներին: Ծրագրի շրջանակներում մինչև 2013-ը ներառյալ մանկատների 453 շրջանավարտ դարձել է ծրագրի շահառու:

Ծրագրի իրականացման ժամանակաշրջանում իրականացվել են սոցիալական պաշտպանության հետևյալ միջոցառումները՝

1. Միանվագ դրամական օգնություն – 233 շրջանավարտի
2. Կրթաթոշակ – 103 շրջանավարտի
3. Մասնագիտական կողմնորոշում, ուսուցում, վերապատրաստում–212 շրջանավարտի
4. Բժշկական ծառայություն – 252 շրջանավարտի
5. Բնակարանի տրամադրում - 160 շրջանավարտի

Ծրագրի իրականացման առաջին տարիներին ծրագրում հիմնականում ընդգրկվել են 1991 թվականից մինչև 2003 թվականը մանկատներն ավարտած անձինք, ովքեր հիմնականում անօթևան էին, ունեին ծանր հոգեբանական և առողջական խնդիրներ, ոմանք ունեին նաև դատվածություն: Նրանք բազմամասնագիտական տարբեր խմբերի աշխատանքի շնորհիվ հիմնականում ինտեգրվեցին հասարակությանը:

Ծրագրի շրջանակներում բնակարան է տրամադրվել մանկատների 160 շրջանավարտի և հարազատների ընտանիքներում բնակվող առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող 6 անձի:

Ծրագրի իրականացման շրջանում բնակարանների տրամադրման գործընթացի հետ կապված որոշակի խնդիրներից ելնելով ժամանակավորապես դադարեցվել է բնակարանների գնման գործընթացը, մշակվել են նոր մոտեցումներ, որդեգրվել է սոցիալական բնակարանային ֆոնդի գաղափարը: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության կողմից 2012 թվականին հաստատված երեխաների իրավունքների

պաշտպանությանն ռազմավարական նոր ուղղությունները, անհրաժեշտ է ծրագիրը վերանայել և այն ուղղել մանկատան շրջանավարտների նոր խնդիրների լուծմանը: Այն կհանդիսանա վերը նշված ծրագրի տրամաբանական շարունակությունը, որը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող բարեփոխումներով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մանկատների վերակազմակերպման արդյունքում մինչև 18 տարեկան երեխաները խնամվում են միայն Վանաձորի և Գավառի մանկատներում, ժամանակավոր կացարանները կվարձակալվեն վերոնշյալ քաղաքներում, որոնք կտրամադրվեն շահառուներին՝ մինչև, սահմանված կարգով, նրանց սոցիալական բնակարանի տրամադրումը:

4. Կարգավորման նպատակը և բնույթը

Նպաստելու շրջանավարտների հետագա կյանքի ինքնուրույն կազմակերպմանը և ինտեգրմանը հասարակությանը:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է ՀՀ աշխատանքի և սոցիալակն հարցերի նախարարության կողմից

6. Ակնկալվող արդյունքը

Ծրագրի ակնկալվող արդյունքն է՝

1. Գավառի և Վանաձորի մանկատների շրջանավարտներին, ծրագրի շրջանակներում կտրամադրվի իրավաբանական, սոցիալ-հոգեբանական խորհրդատվություն, ֆինանսական աջակցություն (կրթաթոշակ, ամսական դրամական աջակցություն և միանվագ դրամական օգնություն), կիրականացվի սոցիալական պատրոնաժ, նրանք կապահովվեն ժամանակավոր կացարանով:

Կապահովվի շրջանավարտների սոցիալական պաշտպանությունը և նրանց ինտեգրումը հասարակության մեջ:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ «ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՄԱՆԿԱՏՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՌՈՒՄ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության «Պետական աջակցություն ՀՀ մանկատների շրջանավարտներին ծրագրի շրջանակում հաստատելու մասին» որոշման նախագիծն ընդունելու դեպքում պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ «ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՄԱՆԿԱՏՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵԼԻՔ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԿԱՄ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1	Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը
	Սույն որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում կամ դրանց ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:
2	Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը
	Որոշման նախագծով կարգավորմանն առաջարկվող հարցերի մասով միջազգային պայմանագրերով պարտավորություններ չեն ստանձնվել:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ «ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՄԱՆԿԱՏՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾՄԱՆԸ ԵՎ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1	Հասարակությանը նախագծի վերաբերյալ իրազեկումը
	Հայաստանի Հանրապետության կառավարության ՀՀ կառավարության «Պետական աջակցություն ՀՀ մանկատների շրջանավարտներին ծրագրի իրականացումը հաստատելու մասին» որոշման նախագիծն տեղադրվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության www.mss.am ինտերնետային կայքում՝ 2013 թվականին: